ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԱԿ-Ի ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻՆ

Օգոստոսի 25-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի նորանշանակ ներկայացուցիչ Դամթյու Դեսալեյնին:

Ողջունելով պրն. Դեսալեյնի այցը հայոց հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Նորին Սրբությունը հաջողություն մաղթեց նրա ասպվածահաճո եւ մարդասիրական առաքելությանը: Վեհափառ Հայրապետը նաեւ գոհունակություն հայտնեց ՄԱԿ-ի գրասենյակի եւ Մայր Աթոռի միջեւ ձեւավորված համագործակցության համար, որի շնորհիվ համատեղ իրականացվել են բնապահպանական մի շարք ծրագրեր:

Մասնավոր անդրադարձ կատարվեց փախստականների խնդիրներին: Ամենայն Հայոց Կաթողիկոսը գնահատանք հայտնեց այն գործակցության համար, որ ՄԱԿ-ի փախստականների հարցերով ներկայացուցչությունը ցուցաբերում է փախստականների ընտանիքներին:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետը պրն. Դեսալեյնին ներկայացրեց Հայոց Եկեղեցու առաքելությունը հայ ժողովրդի կյանքում, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պատմությունը, ինչպես նաեւ Եկեղեցու ներկայիս բազմակողմ գործունեությունը սոցիալական ոլորտում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի օրհնությամբ եւ բարձր փնօրհնությամբ ստեղծված ծիսական հանձնախումբը՝ կազմված Ամենայն Հայոց Կաթողիկոսության, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության, Երուսաղեմի Հայոց Պատրիարքության եւ Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության ներկայացուցիչներից, օգոստոսի 16-17-ը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում զումարեց իր անդրանիկ ժողովը:

Հայ Եկեղեցու ծիսական հանձնախմբի աշխատանքներն ուղղված են Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու առաքելության առավել ամրապնդմանն ու արդյունավետ իրագործմանը, ծիսաարարողական կյանքի առջեւ ծառացած մարտահրավերների հաղթահարմանը եւ ծիսական բարեկարգությանը:

Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի ներկայացուցիչը Վեհարանում